Հավելված
Գյումրի համայնքի ավագանու
2013թ. սեպտեմբերի 13-ի
N 99-Ա որոշման

ՕՐՀՆԵՐԳԻ

համար առաջարկվող

տ ա ր բ ե ր ա կ

ԴՈՒ ԻՄ ԳՅՈՒՄՐԻ

I

Հայաստանի աղն ես, Գյումրի,
Դու խոսքաշեն, սրամիտ,
Ճշմարտության մաղն ես, Գյումրի
Դու իմաստուն, միամիտ:
Աղջիկներդ տնարար են,
Անմահության օրորոց,
Տղաներդ շինարար են,
Դու հանճարեղ քարագործ:

Կրկներգ.
Դու իմ Գյումրի, վաղնջական դու իմ նոր,
Արագածին բազմած արծիվ փառավոր:
/2 անգամ/

II

Դու երգարան Հայաստանի,
Քեզ եմ երգում, իմ Ծիրակ
Դու մի բուռ ես, բայց մի աշխարհ,
Հավերժ կապրես, իմ քաղաք:
Արագածդ արքայական
Ոսկե թագն է քո հողի,
Քո մի քարն էլ, մի ծիլն անգամ
Աշխարհի հետ չեմ փոխի:

Կրկներգ.
Դու իմ Գյումրի, վաղնջական դու իմ նոր,
Արագածին բազմած արծիվ փառավոր:
/2 անգամ/